ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2024 թվականի №---Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊՈՂՈՍԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №2 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացվում տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) անհատ ձեռնարկատեր Անուշավան Պողոսի Գաբրիելյանը Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի հունվարի 31-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը անհատ ձեռնարկատեր Անուշավան Պողոսի Գաբրիելյանի նկատմամբ 2024 թվականի մարտի 26-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 26-ի №ՍՇ/34.2-Մ2-7/1231-2024 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Անուշավան Պողոսի Գաբրիելյանը վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման №1 հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող կարգավորվող անձինք հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացնում առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացվում են փաստաթղթերի էլեկտրոնային շարժի

համակարգի (Mulberry), էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Անուշավան Պողոսի Գաբրիելյանը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, այն է՝ Հաշվետվությունը (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի հունվարի 31-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետից հետո, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Անուշավան Պողոսի Գաբրիելյանին նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Անուշավան Պողոսի Գաբրիելյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2024թ